

ալ մէկալ մեքենաներուն համած ա-
ծուխէն է :

Գ . Աժառականէլք : Ածխահանքե-
րուն ամէն մէկ ձամբաները գետնա-
փոր տեղուանք են , սաստիկ մութ ,
գրեթէ ութը ոտք բարձր և տասնը-
չորս ոտք լայն . երբոր մէկը ան խոր
տեղուանքը մանելու ըլլայ , թէ պէտև
ամէն բան պայծառ կը տեսնէ , բայց
ինքինքը շօշափելի խաւարի մը մէջ
կը կարծէ : Ան ձամբաներուն մէջ՝ պա-
տին ամէն մէկ տասուերկու ոտք եր-
կայնութեանը վրայ մէյմէկ հոգի
կ'աշխատին քովէ քով : Այսոնք առաջ
մուրճով մը ածուխի կտորին չորս
կողմը կը ծակծըկեն կը կոտըրտեն ,
ետքը մէջտեղէն ծակ մը կը բանան ,
մէջը վաւոդ կը լեցընեն , ու կը ակ
տուածնուն պէս ածուխները վար կը
թափին : Երկայն կ'ըլլայ ասոնց ա-
մէն գործողութիւնները մէկիկ մէկիկ
ստորագրել . միայն աս բանք որ Հեթ-
թոնի ածխահանքէն տասնըութը ժա-
մուան մէջ 600 տակառաչափ ածուխ
կ'ելլէ . թէ որ շոգեշարժ մեքենայ
չըանեցընէին , ասոր երեսունին մէկը
հազիւ կը նային հանել :

Դ . Աժառականէլք : Յայտնի է որ
հանքային ածուխը վաճառքի հանե-
լէն առաջ փոշիներէն ու խիճերէն
զատելու է . աս բանիս համար ածու-
խը մաղել հարկ կ'ըլլայ . բայց տեսնե-
լու բան է որ ի՞նչ զարմանալի ձար-
տարութեամբ կ'ընեն աս գործողու-
թիւնը : Ա ասն զի մասնաւոր գործիք-
ներով ածուխին զամբիւզները վեր
ելլելուն պէս , իրենք իրենցմէ մաղե-
լու տեղը կ'անցնին՝ որ ծուռ մակար-
դակ մըն է . անկէ ալ նոյնպէս կ'եր-
թան՝ սնտուկի ձեռվլ պատրաստուած
կառքերու մէջ կը լեցուին . շոգեգոր-
ծին ալ երկթէ ձամբուն վրայէն
կ'առնէ կը տանի ան կառքերը :

Ե . Աժառականէլք առաջարկութէլք : Հան
քային ածուխը կառքերու մէջ լե-
ցուելէն ետքը ուրիշ բան չմնար , բայց
թէ տանիլ նաւերու մէջ լեցընել .
և աս բանիս համար ինչպէս որ ըսինք՝

երկթէ ձամբան կը գործածուի . մա-
նաւանդ թէ երկթէ ձամբան գտնե-
լու պատճառն ալ աս ածուխը եղաւ :
Անգղիայի մէջ գրեթէ բոլոր ածխա-
հանքերը գետերու մօտ են , ու ամէնքն
ալ երկթէ ձամբայ ունին : Պլտի
ածխահանքերու մէջ շոգեշարժ մե-
քենաներուն ըրած գործողութիւն-
ները սովորաբար ձիերը կը կատարեն :

Այսոց բնական նշանները :

Աւագեմբեր :

Այս ամսուս մէջ ամառուան տաքը
կ'իջնայ , աշունը կը համնի , և գիշերն
ու ցորեկը հաւասար կ'ըլլան :

Աշակները ամսուս սկիզբները կ'եր-
թան այգիները աչքէ անցընելու :

Աշան կը դնեն լաւ որթերուն վրայ ,
որ անոնց ձիւղերը տնկեն անշահ որ-
թերուն տեղը :

Անկէ վերջը կը սկսի այգեկութքի
պատրաստութիւնը , որ ան ալ մեծ
հանդէս է :

Պարտէզներու մէջ ալ աշխատան-
քը պակաս չէ . ձմեռուան համար
կաղամք ու աղցաններ կը տնկեն :
Պահելու դգումները կը ժողվեն ու
արեւու մէջ կը դնեն . գետնախնձորնե-
րը հողուն տակէն կը հանեն : Տաք
տեղուանք ձմեռուան պտուղները կը
ժողվեն :

Ծաղիկ հոգացողը կը տնկէ նարկի-
զը , անեմնը , յասմիկը , հրանունկը :
Անուշակը ու մեխակին արմատ ձը-
գած ընձիւզները կը զատէ . հասած
հունտերն ալ կը ժողվէ :

Ա երջապէս պարապ անցընելու ա-
միս չկայ երկրագործին . ու մէկ ա-
միս մը պարապ կենայ նէ , բոլոր տա-
րւոյն վնաս կ'ըլլայ : Այսանկ ալ ուս-
մունքէ հանգիստ ընողը աս միջոցիս ,
թէ որ բալոր ատենը պարապ անցընէ ,
միտքը կը տկարանայ , ու վերջը շատ
կը յոգինի :

Կ, ՈՒՐՈՒ կասլուտակն անկեալ թեթև ՚ի բեհեղ
Բառնայ յօդոց զամարայնոյն ըզբարկ չող,
Ըզմատըռուակ իշնդիցն ածէ զաշուն հեղ:

Ամպ տամկացեալ և սիւդ շընչեալ զովագին
Ի նոր գարուն ձայնէ զբնութիւն փախլստեայ .
Փութան ծավիունք , աւան , յոջոյն ՚ի յետին :

Գեղեցկաձեմ գընայ ընդ բոյ գարշատպար
Դարձ ՚ի մարզից եյուսանէ արարեալ .

Զհետ ընթանայ փարել զաւուրբք հեշտարար :
Հետազոտէ զանտառախիտ հովանին

Ցորս կաքառուց , ծըմականիստ երէոց ,
Որ սաղարթուցն ՚ի շեղ գի ցուրս տարածին :

Մարդարատաշար ոսկեծըզի անդ ողկոյզ
Սուտ օշարակ կենաց ՚ի ծոցն ուռուցիկ ,

Հրաւէր շըմանց կարդայ քաղցրիկ ծորեալ հոյզ :
Դեռ հուր վիժակ առեալ ՚ի պարկ չեքնքոյշ .

Զոր մինչ յաթուր ունի բանա մատնի հնծանին ,
Թափէ ՚ի սիրտ արբեցելոցն անըզգոյշ :

Այդեգործին գրդուել զորթոյն ուռ պարարտ ,
Ո՛թէ յատեալ իմչէր , ասէ , զուռն անպէտ ,

Ի ցանկալիս չվայելէի պրոտուղն արդ :
Գեղ երանի , թէ զնոյն ասել , ով մանկիկ ,

Բնդյապատման կրիցդ իցես բաւական ,

Ցորժամյաշուն տիոցդ հասցես խաղաղիկ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

Դերմանիայի մէջ հասպատուած քանի մը օ-
րէնքներ՝ ծառայից վլճախն ու բարոյահանը
շոէլու համար :

Դաստաթիթ վիճակը ըստ կարի լաւ-
ցընելու համար՝ խիստ հարկաւոր
է որ տէրութիւնը իր կողմանէ քանի
մը կարգաւորութիւններ ընէ , տէ-
րելն ալ իրենց կողմանէ մէկ քանի
զգուշութիւններ ընեն . և ահա հի-
մա Դերմանիայի մէջ ան տեսակ կա-
նոններ դրուած են որ անսնցմով ա-
ղէկ կ'որոշուին ծառայից ու տէրե-
րուն պարտքերը , տէրութիւնն ալ
դիւրաւ կրնայ ծառայից վրայ զգու-
շութիւն ընել : Լուս օրէնքներուն մէջ
գլխաւորներն ասոնք են :

Ա. Որբ տղաք , որ դեռ իրենք ի-
րենց տէրը չեն՝ չկարենան ծառայու-
թեան մէջ մտնել : Հապա պէաք է
անանկ տեղ մը դրուին որ իրենց
հարկաւոր ուսմունքները սորվին , ու
բարքերնին կրթուի , կրօնքի ու քրիս-

տոնէական պարտուց ուսմունքները
լընցընեն :

Բ. Ո՞եկը չկարենայ մարդ մը իրեն
ծառայութեանը մէջ առնել՝ ինըուան
որ ան մարդուն անսունը և համառօտ
վարքը տետրակի մը մէջը գրուած
ըրլայ տէրութենէն՝ իրեն ձեռքբյանձ-
նուած : Լուս կրնար դատարկա-
պորտ ու յանցաւոր մարդիկ ուրիշ
տեղ երթալով ծառայ ըլլալ , հապա
տէրութիւնը իրենց գէշ վարքին հա-
մար դուրս կըքչէ զիրենք :

Գ. Լուս տետրակը կրնայ պահուիլ
կամ տէրութեան քովը , և կամ տի-
րոջը քովլ , քանի որ ան մարդը իրեն
ծառայութեանը մէջ է : Խակ մէջը
գրուելիքն է ծառային ըրած գործ-
քը , հաւատարմութիւնը կամ նոր
տեսակ արդիւնք մը , և թէ որչափ
ատեն կեցեր է իրեն քովը , ինչ պատ-
ճառաւ հաներ է զինքը ծառայութե-
նէ . ահա ասով շատ դիւրին կ'ըլլայ
ամենուն ալ ծառայ բռնելը , ու անոր
հետ վարուիլը :

Դ. Դառայ մը չկրնար երկար ա-
տեն պարապ պտըտիլ . որպէս զի գի-
նովութեան ու ծուլութեան չվար-
ժի : Տէրութիւնը իր քովի ցուցակին
մէկէն կ'իմանայ թէ ով ծառայութե-
նէ ելեր է , ու շուտ մը ատեն կ'որոշէ
որ այսչափ ատենի մէջ տիրոջ մը քովլ
մտնէ , ապա թէ ոչ ան գաւառէն կը
քչէ զինքը :

Ե. Հիմակուան օրէնքները կըսոր-
վեցընեն ընդհանրապէս թէ ինչ պատ-
ճառներով դաշինքնին կրնան աւրել
իրաւամբք թէ տէրը և թէ ծառան :
Տէրը կրնայ վարնտել ծառան՝ երբոր
տեսնէ թէ տան մէջ եղած տղոցը գէշ
բաներ կըսորվեցընէ , և գիշեր ատեն
տիրոջը կամացը գէմ շատ անգամ
տնէն դուրս կը կենայ , և այլն : Դա-
ռան կրնայ ելլել՝ երբոր տէրը զինքը
բռնադատէ աստուածային կամեկե-
ղեցական պատուիրանաց գէմբան ը-
նելու . դարձեալ կրնայ ելլել՝ երբոր
իրեն տէրը բոլորովին ուրիշ քաղաք
պիտի երթայ և այլն :